

## Տաքնիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության հիմնադրամ

### ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՍԱՀԱՐԻ» ՊՈԵՄԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԵՐՏԸ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի առնչությունն Արևելքի հետ: Միևնույն ժամանակ ուսումնասիրվել են արաբական ծագում ունեցող բառերը, արտահայտությունները, որոնք հեղինակն օգտագործել է արևելյան շունչն արտահայտելու համար և իր հարուստ նկարագրությամբ ստեղծել արևելյան հասկացությունների և պատկերների մի յուրօրինակ շորջսյար: Բացի այդ քննության են առնվել արևելքին բնորոշ տեսարանները, այդ թվում՝ ուղտերի քարավանի, անապատի նկարագրությունները:

**Քանալի բառեր.** «Աբու-Լալա Մահարի» պոեմ, Արևելք, արևելյան հասկացություններ, արաբական ծագում ունեցող բառեր և արտահայտություններ, արևելյան շունչ, քարավան, անապատ

Հայ անվանի բանաստեղծ Ավետիք Իսահակյանը նշանավոր «Աբու-Լալա Մահարի» պոեմի ստեղծման վերաբերյալ հետևյալ գրառումն է կատարել. «Գրված 1909թ. 30-ն օգոստոսի մինչև 2-ն սեպտեմբերի և 1910թ. 27-ն մարտի մինչև 4-ն ապրիլի Ղազարապատում» /Իսահակյան, 2007: 89/: Առաջին անգամ պոեմից մի հատված տպագրվել է 1909-ին «Գեղարվեստ» ամսագրում, իսկ հետագայում այն տպագրվել է ամբողջությամբ: Իսահակյանի նախորդ տարիների ստեղծագործությունները վկայում են այն մասին, որ նախապատրաստվում էր հոյակապ ստեղծագործության ծնունդը: Օրինակ՝ կարելի է նշել Իսահակյանի «Օտար ամայի ճամփեքի վրա» բանաստեղծությունը, որը լի է թափառումների տրամադրություններով: Ներկայացվում են դողանջող քարավանի և անծայր անապատի պատկերները, կյանքի անարդարություններից դառնացած մարդու ցավերը: Այս բանաստեղծության, ինչպես և «Աբու-Լալա Մահարի» պոեմի մեջ անարդար կյանքից հեռանալու և անապատին ապավինելու պատկերներում կարելի է ընդհանրություններ նկատել:

«Աբու-Լալա Մահարի» պոեմը բաղկացած է նախերգանքից, յոթ սուրահներից և վերջաբանից: Պոեմի վերնագիրն արաբ հայտնի պոետ Աբու-լ Ալա ալ Մաարրիի (Աբ(ու)- արաբերենից թարգմանաբար նշանակում է հայր, իսկ ա՛լալա՝ բարձրություն, վեհություն) անվան կրճատ ձևն է: Թեպետ շատերի կարծիքով պոեմում տեղի ունեցող փաստերը կապված են արաբ բանաստեղծի կյանքի հետ, այնուամենայնիվ, Պողոս Մակինցյանի կարծիքով՝ «...Ավետիք Իսահակյանի քասիտը պատմական գործ չէ. պոեմի վերնագիրը Աբու Լալայի անվան փոխարեն կարող էր լինել և՛ Աբու Ֆիրաս, և՛ Աբու Մոհամմադ, և՛ դրանից ոչինչ չէր փոխվի»...

«...Դա ավելի շուտ Շիրակի բանաստեղծի ապրումների պատմությունն է, քան թե պատմական «Բաղդադի» բանաստեղծի կյանքի վեպը» /Մակինցյան, 1980: 106/:

Իսահակյանը, պոեմը բաժանելով գլուխների, յուրաքանչյուրն անվանում է արաբական ծագում ունեցող «սուրահ» բառով, որը թարգմանաբար նշանակում է գլուխ, մաս, բաժին: Այսպես անվանելով՝ նա ևս մեկ անգամ մատնանշել է պոեմի կապվածությունն Արևելքի հետ: Հայտնի է, որ մուսուլմանների «Սուրբ Դուրան» գիրքը ևս բաժանված է 114 սուրահների՝ գլուխների: Այս առիթով ռուս հայտնի արաբագետ Ի. Յու. Կրաչկովսկին նշել է, որ «սուրահ»-ն արաբների մոտ հատուկ նշանակություն ունի՝ նկատի ունենալով Սուրբ Դուրանի սուրահները: Գրականագետ Կարեն Միքայելյանին ուղղված նամակում Իսահակյանը նշում է. «... բայց ես ուզեցել եմ նոր «Դուրան» գրել. (մանիա գրանդիոզա մեծամտություն)» /Իսահակյան, 2007: 35/: Այս խոսքերից կարելի է հասկանալ պոեմի էությունը, որ Իսահակյանը գրում էր ոչ միայն գեղարվեստական ստեղծագործություն, այլև փիլիսոփայական երկ: Եթե նա ասել է, որ ցանկանում է նոր «Դուրան» գրել, ապա դա պետք է լիներ «Ազատության Դուրան», և միայն ազատության իշխելու դեպքում ամեն ինչ կյանքում իր տեղում կլիներ:

Իսահակյանի «խոհերի քարավանի» թելն առանց ընդհատվելու ձգվում է և կազմում ամբողջական խոսք: Բացի նախաբանից՝ մնացած բոլոր սուրահներն սկսվում են «և» շաղկապով: «Եվ»-ը սուրահներն իրար միավորելու, կապակցելու, մտքերի ընթացքը շարունակական դարձնելու գորեղ դեր է կատարում: Միգուցե Իսահակյանը «և» շաղկապի գործածությամբ ստեղծագործությանը ևս մեկ անգամ արևելյան շունչ է տվել. չէ՞ որ արաբական ստեղծագործություններին և, առհասարակ, արաբական խոսքին բնորոշ է «և» շաղկապի հաճախակի գործածությունը:

Պոեմում խորհրդանիշներ են արևը, անծայրածիր հեռուները, անապատը, ուղտը:

Պոեմն աչքի է ընկնում իր հարուստ բառապաշարով, պատկերավորման միջոցներով, ինչպես նաև մակդիրներով՝ նիրհած գիշեր, անուշ դողանք, մեղկ փափկություն, անուշ գանձեր, պայծառ ադամանդեղեն ծիծաղ, գոհար աստղեր, շքեղ, անշեջ դաշնակ, անուշ քուն, սեզ քարավան:

Ռ. Դալլաքյանը, պոեմը ենթարկելով լեզվաբանական վերլուծության, նշում է. «Հմտորեն օգտագործելով հայոց լեզվի հարուստ բառազանձը, պատկերավորման ու արտահայտչական բազմազան միջոցները՝ ինչպես նաև արաբական քասիդի ձևը, որ բանաստեղծական խոսքին հաղորդում է մի առանձին վեհություն ու հանդիսավորություն, բանաստեղծն ուժեղացրել է ելևէջավորումն ու հնչերանգը: Երկի բոլոր տները բաղկացած են երկուական տողերից, բացի սկիզբ-նախաբանի տողերի: Դրանցից յուրաքանչյուր տողը, կազմված է քսան վանկից և երեք հատվածներով բաժանվում է չորս անդամի: Եվ կիրառված քառանդամ քսանվանկանի չափը ներդաշնակում է ուղտերի քարավանի շարժման ընթացքին: Պոեմի երաժշտայնությանը, հուզականությանը նպաստում են ներդաշնակ ռիթմը, կանոնավոր հանգերը: Պոեմում

ընդգծված կարևորություն են ներկայացնում ռիթմավորումն ու հանգավորումը» /Գալլաքյան, 2004: 21/: Ուսումնասիրելով արաբերենի տաղաչափական ընդհանուր հիմունքները՝ կարելի է նշել, որ Իսահակյանն իր պոեմը գրել է «մութակարիք» կամ «մութադարիք» չափերով, այսինքն՝ պոեմի յուրաքանչյուր տող բաղկացած է չորս անդամից, որոնք բաժանվում են հինգ վանկերի /Արաբերենի տաղաչափության առանձնահատկությունները տե՛ս Սամվել Կարաբեկյանի «Արաբական տաղաչափության հիմունքներ» գրքում/:

*Օրինակ՝...Եվ քարավանը // Աբու Լալայի// աղբյուրի մման// մեղմ կարկաչելով//*

Պոեմի նախերգանքում, յոթ սուրահներում և վերջաբանում հաճախակի հանդիպում են Արևելքին բնորոշ տեսարաններ, ինչպես նաև արաբական ծագում ունեցող բառեր, բառակապակցություններ և հասկացություններ, որոնցից են խալիֆա-արաբ տիրակալ, սուրահ-գլուխ, մաս, բաժին, ջեննաթ-դրախտ, բլբուլ-տխակ, գյուլստան-դաշտ, պարտեզ, գազել-արաբական բանաստեղծության ձև, քյոշք- պալատ, իբլիս-սատանա, բալասան-դեղ, սպեղանի, ջեհնեմ-դժոխք, ջիմներ-բարի և չար ոգիների անվանումը արաբական և պարսկական դիցաբանության մեջ, բաշեր- գլուխ, շեյթան-սատանա, Ալ Կորան-Սուրբ Դուրան, շեմս-արև, սալամ- խաղաղություն, բարև, ողջույնի ձև, շյուքր-փառք, շնորհակալություն, բեդվին-թափառական, քասիդ-արևելյան բանաստեղծության ձև, սերաբ-պատրանքների, հրապույրների տեսիլ, գազել-արևելյան ոտանավորի տեսակ, բաղիե անապատ:

Պոեմի հետագա տպագրություններում կարելի է տեսնել «Աբու-Լալա Մահարի» պոեմ-քասիդ անվանումը, իսկ որոշ տպագրություններում «քասիդ» բառը հանված է, պարզապես անվանված «Աբու-Լալա Մահարի»: «Քասիդա» բառն արաբերենից թարգմանաբար նշանակում է պոեմ: Հավանաբար, այսպես վերնագրելով, Իսահակյանը կրկին ընդգծել է պոեմի արևելյան շունչը:

Պոեմի հակիրճ նախերգանքից հետո, որտեղ նկարագրվում է Բաղդադի բանաստեղծի շքեղ կյանքը, վայելքները, սպա հիասթափությունները, Բաղդադից գիշերով հեռանալու նրա քայլը և մեծ կյանքի ճանապարհը, առաջին սուրահում նկարագրվում է Աբու Լալայի քարավանը, որ հանգիստ, հավասար քայլով անցնում էր ոլոր-մոլոր ճանապարհով: Իր հեռանալու պահին Բաղդադը նիրհում էր ջեննեթի շքեղ, վառ երագներով: Այստեղ Իսահակյանն օգտագործել է «ջեննաթ» բառը, որն արաբերենից թարգմանաբար նշանակում է դրախտ: Ապա նկարագրվում է, թե ինչպես են դաշտերում սոխակներն անուշ երգում, իսկ շատրվանները քրքջում են պայծառ ծիծաղով, թե ինչպես է հովը շշնջում հազար ու մի գիշերվա հեքիաթները, իսկ խալիֆաների պալատից բույր ու համբույր է խնկարկվում: Արևելյան պալատի, հարեմի տեսարանները շատրվաններով, սոխակներով և վարդերով, ասես արևելյան մանրանկար են ստեղծել:

*Մեղկ փափկության մեջ Բաղդադն էր նիրհում ջեննաթի շքեղ, վառ երագներով,*

*Գյուլստաններում բլբուլն էր երգում գազելներն անուշ՝ սիրո արցունքով:  
Շատրվանները քրքջում էին պայծառ ծիծաղով ադամանդեղեն,*

*Բույր և համբույր էր խնկարկվում չորս կողմ խալիֆաների քյոշքից լուսեղեն /Իսահակյան Ավետիք, 1950: 60/:*

Բանաստեղծը նկարագրում է իր քարավանը, Արևելքին բնորոշ անապատը, ինչպես նաև ուղտը: Քարավանն անվանում է սեզ քարավան, ձիգ քարավան, որոր-շորոր քարավան, անապատը՝ վայրի ու բոցոտ, նկարագրում է անապատի դեղին շեղջերը, որ հորձանքներ են տալիս ալիքների պես, ապա անդրադառնում է ուղտի թավ պարանոցին և վճիտ աչքերին:

Արևելյան պատկերներին զուգահեռ նա ցույց է տալիս իր ատելությունը մարդկանց հանդեպ և նախընտրում է օձերի և կարիճների ընկերությունը, քան կեղծ ընկերների: Աբու Լալայի կարծիքով ավելի լավ է ճաշի նստել գազանների հետ, քան իր կեղծ ընկերներին տեսնել:

Երկրորդ սուրահում ուժեղանում են կեղծիքի և պատրանքի պատկերները. այստեղ նկարագրվում է խորամանկ, խաբող կինը, նրան համեմատում է սատանայի հետ:

*Եվ կինն ինչ է որ... խորամանկ, խաբող, առնախանձ մի սարդ, հավերժ նանրամիտ,*

*Որ հացդ է սիրում, համբույրի մեջ սուտ և քո գրկի մեջ գրկում ուրիշին:*

*Խարխուլ մակույկով հանձնվի՛ր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին:*

*...Նա՛ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք, նրա բերանով Իբլիսն է խոսում /Իսահակյան Ավետիք, 1950: 62-63/:*

Իսահակյանն արաբական ծագում ունեցող «իբլիս» բառն է օգտագործում, որ նշանակում է սատանա: «Իբլիս» բառը, որպես սատանա, կիրառված է նաև «Շահ Նամե» ստեղծագործության մեջ: Ապա ավելի մեծ ատելությամբ անհիծում է կնոջ ծնունդը:

Նա ատում է հավիտյան այրող, խոցող սերը՝ համարելով այն մահի պես անգութ, հավիտյան այրող, գաղտնաբար խոցող, ինչպես նաև քաղցր թույն: Այս ամենի հետ ցավ և դառնություն է զգացվում: Միրո նկատմամբ այս մեծ ատելության դրսևորումը կարելի է կապել Իսահակյանի անձնական կյանքի՝ Շուշանիկ Մատակյանի հետ առնչվող սիրո տխուր պատմության հետ:

Երկրորդ սուրահի վերջում նա մեջբերում է անում արաբ բանաստեղծից.

*Սրիկա է նա, ով հայր է լինում, ով երանավետ ծոցից ոչնչի՛*

*Գոյության կոչում թշվառ հյուլեին և գլխին վառում գեհենն այս կյանքի:*

*«Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն՝ չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ» (Այս խոսքերը գրված են արաբ բանաստեղծի շիրիմի վրա):*

Այս իմ կտակը թող գրվի շիրիմիս, եթե լուսնի տակ մի խորշ պիտի գտնեն /Իսահակյան Ավետիք, 1950: 64/:

Երրորդ սուրահում նույնպես զգացվում է Արևելքի շունչը: Որպես բանաստեղծական պատկերներ՝ նպատակային ձևով ընտրված են արևելյան ոճավորմամբ և արևելքին բնորոշ հասկացությունները: Պոեմն ունի երկու առանցք՝ որպես սկիզբ և վերջ. սկիզբը՝ արևելյան քաղաքը և պալատը կամ պարտեզն է, իսկ վերջը՝ արևելյան անապատը և արևը: Նկարագրվում է Աբու-Լալայի քարավանը, որ քայլում էր հեզ լուսնկայի շողերի միջով, լուսինը

համեմատում է ջեննեթի՝ դրախտի երիտասարդ փերիի կրծքի հետ, իսկ աշխարհը՝ անսկիզբ, անվերջ, հրաշք հեքիաթի հետ.

*Եվ լուսինն, ինչպես ջեննեթի մատաղ փերիի կուծքը՝ չքնաղ լուսավառ՝*

*Մերթ ամաչելով պահվում էր ամպում և մերթ թրթռուն փայլում էր պայծառ*  
/Իսահակյան Ավետիք, 1950: 65/:

Այս տեսարանին հաջորդում է կույր ու գուլ մարդկանց նկարագրությունը, ովքեր իրար կոկորդ են պատռում և աշխարհը դժոխք դարձնում: Գրախտի պարտեզի և հրաշեկ անապատի կողքին նշում է դժոխք-ջեհնեմը:

Չորրորդ սուրահում Մահարին մտնում է պոռթկացող հակասությունների մեջ: Նկարագրվում են մոլեգնող մրրիկներ, թանձր խավար: Անտուն և մենակ հերոսը հետևում է մարդկային հարաբերություններին և մարդկության ճակատագրին: Նա մռայլվում է և սքանչանում, նգովում և օրհնում է միաժամանակ, նկարագրում իր մենությունը.

*Մենակությունն է իմ սերը հիմա, երկինքն աստղաբիր-վրանս հայրական,*

*Եվ քարավանն է ընկերս հիմա, և իմ հանգիստը՝ ուղիս անկայան*  
/Իսահակյան Ավետիք, 1950: 69/:

Հինգերորդ սուրահում Աբու Լալայի քարավանը վայրագ ջինների, այսինքն, քաջքերի մրրկապարը ճեղքելով, առաջ է ընթանում և արագացնում քարավանի ընթացքը՝ հորդորելով նրան հեռանալ բոլորից: Ոգիները՝ ջինները, դարձյալ արևելյան ծագում ունեն:

Վեցերորդ սուրահում արևելյան շերտը նկատելի է դառնում, երբ խոսվում է, թե ինչպես են արևի բարկ ճառագայթների տակ բուրում նարճիսը (նարգիզ) և զաթարը (արաբական համեմունք), կրկին նկարագրվում է անապատը: Ապա զգացվում է զայրույթը համայն աշխարհի, մարդկանց նկատմամբ, և այս անգամ նրանց համարում է շեյթանի՝ սատանայի վիժվածք: Այսպիսով՝ Իսահակյանն իր հարուստ նկարագրությամբ ստեղծել է արևելյան հասկացությունների և պատկերների մի յուրօրինակ շուրջպար:

*Սոսկ շահի համար, շահին միշտ գերի, աստվածացնող թաթը եղեռնի,*

*Ահա մարդը միշտ-պատկերն աստծու, սակայն իրապես վիժվածք*  
*շեյթանի* /Իսահակյան Ավետիք, 1950: 75/:

Յոթերորդ սուրահում Աբու Լալայի քարավանը հոգնած հասնում է Արաբական մեծ անապատ: Հեռվում ամայի հորիզոններն են, մութը հավաքել է իր թավշյա փեշերը, իսկ երկինքը ծփում է բոսոր բոցերով: Գլուխը հենելով ժայռին՝ Աբու Լալան կարծես հանգստություն և ազատություն է զգում մարդկանցից հեռու:

Ազատությունը, ինչպես նաև անապատը և արևելյան հանդերձավորումը համեմատում է դրախտային վարդերի բուսունքի հետ, նաև համեմատում է անմահ սուրբ Դուրանի հետ՝ կոչ անելով դեկավարել համայն աշխարհը: Ապա պատկերվում է արևը՝ անվանելով այն շեմս-արև՝ շքեղ, լուսավառ, և ողջունում է արևի գալուստը.

*- Սալամ քեզ, արև՝ շյուքըր բյուրաբյուր, դու աստծուց հզոր, դու կյանքի*  
*աղբյուր,*

*Ղու, իմ անմահ մայր, մայրական դու գիրկ, դու միակ բարի, դու միակ սուրբ, սուրբ* /Իսահակյան Ավետիք, 1950: 78/:

Ողջույն ձևը բնորոշ է Արևելքին, «սալամ» բառացի նշանակում է խաղաղություն, նաև ողջույնի ձև է և ծիսական արտահայտություն, իսկ «շյուքը»՝ փառք:

Վերջին սուրահում արդեն Աբու Լալայի թռիչքն է նկարագրվում դեպի արև: Այստեղ ուղտերը համեմատվում են ոսկե մակույկների հետ, իսկ անապատը՝ ծովի հուր ալիքների: Մակույկները սլանում էին հրաշունչ թևով, և ոչ ոք չէր կարող հասնել նրանց, անգամ վայրի բեդվինի նետը: Այստեղ ևս Իսահակյանը շեշտել է, որ արաբական պատկերը համարժեք է օգտագործված միջավայրին: Ինչպես Թումանյանն իր «Թմկաբերդի առումը» ստեղծագործության մեջ նշում է «Քաջ որսկանի գյուլի պես» արտահայտությունն իր ստեղծագործության միջավայրին համապատասխան, այնպես էլ Իսահակյանը միջավայրին համապատասխան օգտագործել է «բեդվինի նետ» արտահայտությունը:

Ալեկոծ տրամադրությունների մթնոլորտում օրհներգության միջից որոշ դադարներով կրկնվում է սուրբ, սուրբ արտահայտությունը: Կրկնակ արտահայտությունը բանաստեղծական կիզակետին է հասցնում խոսքի մեղեդային-ռիթմիկ շարժումը, ստեղծում վեհացման անկրկնելի պահեր /Հայ նոր գրականության պատմություն, 1979: 369/:

Պոեմի հարուստ բառապաշարի վերաբերյալ Ռ. Դալլաբյանը նշել է. «Իսահակյանի ըմբռնմամբ բառը մի ձև է, մի կերպարանք, որ անգոր է արտահայտելու լիովին կամ որոշակի այն միտքը, այն զգացումը, որ տվյալ վայրկյանում ունի հոգին: Մենք բառերի տակ պիտի հասկանանք շատ բան, պիտի երևակայենք, պիտի գլխի ընկնենք, պիտի վերապրենք, ամեն բառը տակը մի աշխարհ ունի» /Դալլաբյան, 2004: 38/:

Այսպիսով՝ պոեմում օգտագործված արաբական ծագում ունեցող բառերը, արևելքին բնորոշ ուղտի, ինչպես նաև քարավանի, անապատի հարուստ նկարագրությունները, մահմեդականների սուրբ գրքի՝ Դուրանի հետ արված համեմատությունները կազմել են «Աբու Լալա Մահարի» պոեմի արևելյան շերտը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դալլաբյան Ռ. Հ. Աբու-Լալա Մահարի պոեմի լեզվաբանական վերլուծություն, Երևան, 2004:
2. Իսահակյան Ավետիք, Հայ նոր գրականության պատմություն, 5-րդ հատոր, Երևան, 1979:
3. Մակինցյան Պ. Դիմագծեր, Ավետիք Իսահակյան, Երևան, 1980:
4. Կարաբեկյան Ս. Արաբական տաղաչափության հիմունքներ, Երևան, 2002:

5. Իսահակյան Ավիկ, Ավետիք Իսահակյանի պոեմները, Աբու-Լալա Մահարի պոեմի հերոսը և հեղինակը, Երևան, 2007:
6. Իսահակյան Ավետիք, Երկերի ժողովածու, 2-րդ հատորից (Պոեմներ, լեզենդներ, և բալլադներ, առակներ և թարգմանություններ), Երևան, 1950:
7. Իսահակյան Ավետիք, Ընտիր երկեր, բանաստեղծություններ, պոեմներ, լեզենդներ և բալլադներ, Երևան, 2007:
8. Крачковский И. Ю. Аль-Мутанабби и Абу-л-Ала. Избранные сочинения, т. 2., М.-Л., 1956.

**Т. АРУТЮНЯН – *Восточный пласт поэмы Аветика Исаакяна «Абу-Лала Маари».*** – Целью данной статьи является изучение связи поэмы Аветика Исаакяна «Абу-Лала Маари» с Востоком. Выявлены и исследованы слова и выражения арабского происхождения, которые автор использовал, чтобы выразить дух Востока и своими богатыми описаниями создать своеобразную поэму с уникальными восточными понятиями. Рассмотрены сцены, типичные для Востока, среди которых особое место занимают описания караван верблюдов и пустыни.

**Ключевые слова:** поэма «Абу-Лала Маари», Восток, слова и выражения арабского происхождения, дух Востока, караваны, пустыня

**Т. HARUTYUNYAN – *Eastern Layer of the Poem “Abu-Lala Mahari” by Avetik Isahakyan.*** – The aim of the present paper is to explore the connection of the poem “Abu-Lala Mahari” by Avetik Isahakyan with the East. The paper focuses on words and expressions of Arabic origin used by the author to describe the eastern spirit. With his picturesque descriptions Avetik Isahakyan creates a unique roundelay of the eastern concepts and images. The descriptions of the caravan of camels and the desert are worth mentioning.

**Key words:** “Abu-Lala Mahari”, words and phrases of Arabic origin, the East, the eastern spirit, caravan, desert